

## ԿԱՐԾԻՔ

### ՀԱՍՍԻԿ ՍՊԱՐՏԱԿԻ ՂԱԶՈՅԱՆԻ

«ՓՈԽԱԲԵՐՄԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ

ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ/ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի  
տերմինների նյութի հիման վրա» ատենախոսության վերաբերյալ

Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման համար

Ժամանակակից աշխարհում յուրաքանչյուր ոլորտին վերաբերող փոփոխությունները չափազանց արագ են ընթանում, ինչն էլ պայմանավորված է նորարարական տեխնոլոգիաների ստեղծմամբ, զարգացմամբ, տարբեր ոլորտներում դրանց ներդրմամբ և ըստ անհրաժեշտության՝ օգտագործմամբ: Բոլոր բնագավառների մեջ իր անմիջական մասնակցությունն ունի լեզուն, քանի որ ամեն տեսակի հաղորդակցում կատարվում է հենց լեզվի միջոցով: Պատահական չէ նաև, որ լեզվում նորաստեղծ բառերի առկայությունը պայմանավորված է հենց նորաստեղծ իրականությամբ՝ բառերով, տերմիններով, գաղափարներով և այլ գործոններով: Տերմինները, որպես լեզվի բառապաշարի տարր, մշտապես իրենց կայուն և ուրույն դերն են ունեցել գիտության, տեխնիկայի, մշակույթի ու հասարակական կյանքին առնչվող տարբեր բնագավառներում, դրանք դարձնելով առանձնահատուկ ու տարբերվող մյուս ոլորտներից: Ընդունված երևույթ է, որ յուրաքանչյուր մասնագիտություն բնութագրվում է իրեն բնորոշ հատուկ տերմիններով ու հասկացություններով, որոնք տվյալ մասնագիտության համակարգի և տվյալ լեզվի բառային կազմի բաղկացուցիչ մասն են կազմում:

Հասարակական-քաղաքական կյանքի տարբեր բնագավառների աննախադեպ զարգացումը նպաստում է նաև բառապաշարի օրեցօր հարստացմանը:

Մույն ատենախոսությունը նվիրված է տերմինների քննությանը, որտեղ հանգամանակից քննության են առնվում տերմինների փոխաբերականացումը և դրանցից բխող առանձնահատկությունները: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից:

Աշխատանքի ներածական բաժնում հանգամանորեն ներկայացվում է աշխատանքի նպատակը, նյութի ընտրության առանձնահատկությունը, արդիականացումը և նորույթը: Սույն բաժինը քննում է նաև աշխատանքի մեթոդաբանական հիմքը, տեսական ու գործնական արժեքը:

Առաջին գլուխը՝ «Տերմինաբանական հետազոտությունները լեզվաբանության ժամանակակից հարացույցում» քննում է տերմինների ստեղծման ու զարգացման հիմնահարցերը, տարվում դրանց զուգադրական քննությունը, դիտարկվում է տեսական հիմքերը: Քննված տեսական նյութը հնարավորություն է տալիս եզրահանգելու, որ տերմինը լեզվի մեջ օգտագործվում է հատուկ նպատակների համար, դիտարկվում է ոչ թե առանձին միավոր՝ համատեքստից անկախ, այլ՝ բառ, որն ունակ է փոխել իր բովանդակությունը: Անշուշտ, նշվածը դիտարկվում է նոր երևույթների ու հասկացությունների ստեղծման հրամայականով, երբ տերմինը, դառնալով արդեն ոլորտի գործածության առարկա, իր հաստատուն տեղն է գտնում լեզվի բառային-իմաստաբանական համակարգում: Տարվում է նաև տերմին և բառ հասկացությունների զուգադրական քննություն, որտեղ ատենախոսը հանգամանակից կերպով ներկայացնում է բառի և տերմինի առանձնահատկությունները և կիրառության չափանիշները: Տրվում են նաև համոզիչ ու սպառիչ օրինակներ, որոնք ներկայացված նյութը ավելի պատկերավոր են դարձնում: Անդրադարձ է կատարվում տեխնիկական տերմինների ստեղծման և զարգացման գործընթացին վերաբերող հարցերին, որտեղ ատենախոսը ներկայացնում է էլեկտրոնային տեխնիկային վերաբերող տերմիններ և նշում դրանց ծագման աղբյուրն ու առանձնահատկությունները: Առաջին գլխի և հաջորդող գլուխների ծանոթագրությունները ամբողջացնում են ներկայացվող նյութի քննությունը:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ «Փոխաբերականացումը որպես լեզվական երևույթ» քննում է փոխաբերությունը որպես փոխաբերականացման հիմնական միջոց: Հարկ է նշել, որ այս գլուխը որպես հենասյուն է հանդես գալիս և հիմք հանդիսանում երրորդ գլխի հենքային առանձնահատկությունները ներկայացնելու համար: Սույն գլխում ատենախոսը իրավացիորեն դիտարկում է փոխաբերությունը որպես լեզվի պատկերավոր միջոց, ինչպես նաև քննում փոխաբերության կիրառությունը գիտական ոլորտի մեջ: Ատենախոսի ուշադրությունից չի

վրիպել անդրադառնալ տեխնիկական տերմինների իմաստային առանձնահատկություններին, որոնց կազմավորման եղանակներից նշվում է բառաբարդումը, ածանցումը, ինչպես նաև բառի նշանակության փոփոխությունը: Աշխատանքի երկրորդ գլուխը ներառում է նաև աղյուսակ, որն ատենախոսը կազմել է բառային իմաստի առանձնահատկությունները վեր հանելու և դրանք զուգադրելու համագործածական լեզվում և տեխնիկական տերմինաբանության մեջ: Այս հանգամանքը, վստահաբար, կարելի է դիտարկել որպես աշխատանքի առավելություններից մեկը:

Ատենախոսության երրորդ գլուխը՝ «Փոխաբերականացումը որպես տեխնիկական տերմինների ստեղծման հիմք» կարելի է համարել աշխատանքի գաղափարական և նպատակային հարթությունների, ինչպես նաև տեսական և գործնական նյութի համադրման և վերլուծության հիմնավոր դրսևորում: Սույն գլուխը քննում է ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի տերմինաբանության իմաստային դաշտի հիմնական առանձնահատկությունները, որոնք արտացոլվում են փոխաբերականացման արդյունքում ձևավորված տերմիններում: Աշխատանքի առավելություններից կարելի է դիտարկել նաև այն հանգամանքը, որ ատենախոսը, վերը նշվածը հիմնավորելու և ավելի պատկերավոր դարձնելու նպատակով փոխաբերականացման արդյունքում ձևավորված տերմինները խմբավորել, առանձնացրել է և ամեն մի առանձնացված խմբին համապատասխան ներկայացրել աղյուսակներ՝ դիտարկելով բառը, բառային միավորը որպես համագործածական բառ և բառային միավորը որպես ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում կիրառվող տերմինի զուգադրական քննություն:

Աշխատանքը իր ձևաչափի մեջ համակողմանի է և համապարփակ: Ներկայացված ատենախոսության մեջ նկատվում են ատենախոսի անտրտունջ և համառ ջանքերը, ինչն էլ ապահովել է աշխատանքի ավարտուն և հիմնավորված գործընթացը: Աշխատանքը կատարված է բարեխղճությամբ, հստակ երևում է ատենախոսի նվիրվածությունը իր աշխատանքին: Կարելի է փաստել, որ ատենախոսը ամբողջովին կատարել է իր առջև դրված խնդիրները, հասել ակնկալվող արդյունքի՝ քննելով իր թեմային առնչվող տեսական և գործնական նյութը և իր ուրույն խոսքը ներկայացրել

քննարկվող թեմայի առնչությամբ: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և ընդգրկում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Աշխատանքը կարելի է համարել հիմնավոր, արդյունքները՝ հաջողված:

Այնուամենայնիվ, հարկ ենք համարում անդրադառնալ նաև որոշ նկատառումների, որոնց շտկման առումով աշխատանքը էլ ավելի կշահեր:

- Պահպանելով ակադեմիական խոսքի առանձնահատկությունները մեր կարծիքով էջ 23, 24, 28, 54 «կարող ենք ասել»՝ արտահայտությունը կարելի էր փոխարինել «փաստել» տարբերակով, էջ 65 «մենք քննարկեցինք» արտահայտությունը կարելի էր փոխարինել «քննարկվեց» տարբերակով:
- Էջ 17 ատենախոսը անդրադառնում է գիտական տեքստի բառապաշարի երեք շերտերին և մեջբերում միայն /Ն.Փասպարյանին «Արտոնագրային մասնագրի լեզվաոճական առանձնահատկությունները» 2007 աշխատությունը: Ավելի նպատակահարմար կլիներ, այս առնչությամբ, դիտարկել նաև այլ գիտնականների /Լ.Եզեկյանի, Ժ.Գոլիկովայի Ի.Գալպերինի, Ի.Արնոլդի/ տեսակետները և մեջբերել աշխատանքի մեջ:
- Մեր կարծիքով աշխատանքի գլուխների վերջում ներկայացված եզրահանգումները շատ համառոտ են, գլուխներում ներկայացված գիտական ու գործնական վերլուծական աշխատանքի համեմատությամբ: Կարելի էր եզրահանգումները մի փոքր ընդլայնված տարբերակով ներկայացնել, առավել ևս, որ քննվող նյութը լայնածավալ վերլուծության է ենթարկվել և ներկայացվել համապատասխան գլուխներում:
- Գրականության ցանկում տեղ են գտել գրքեր, որոնք կարելի էր փոխարինել նոր հրատարակված տարբերակներով՝ օրինակ Авербух К.Я. Терминологическая вариантность; Теоретические и прикладные аспекты// Вопросы языкознания. №6. 1986, с.38-50, Блек М. Метафора//Теория метафоры. М.1990, с.153-172, Гальперин И. Очерки по стилистике англ.яз. 1958, с.462, Дрезен Э. Научно-технические термины и обозначения и их стандартизация, 3-е изд. перераб. М.1936, с.136, Black M., More about Metaphors // Metaphoric thought/ Cambridge University Press, 1980, pp.19-45, Schlauch M.

